**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ν 25 -Ա

23 մայիսի 2016 թվական — գյուղ Ախուրյան

## «ՇԻՐԱԿ -ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով,

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով,

ինչպես նաև համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Նոտարական վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 1851-Ն որոշման, ***Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնել «Շիրակ-Ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը։

2. **Գույքի գտնվելու վայրն է՝** Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք.

**Գույքի ծածկագիրն է՝** 008-007-

**Գույքի մակերեսը՝** 700քառ.մ

**Գույքի նպատակային նշանակությունը՝**

էներգետիկայի,տրանսպորտի,կապի,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ

**Հողամասի գործառնական նշանակությունը՝**

կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ

Ավագանու անդամներ՝ կողմ 7 ( յոթ ) դեմ 0 ( զրո ) ձեռնպահ 0( զրո )

Արտավազդ Սանթրոսյան ____________

Արտաշես Գևորգյան ____________

Արա Մուշեղյան ____________

Կարեն Սերգոյան ____________

Սամվել Հովիկյան ____________

Վանիկ Մկրտչյան ____________

Վահան Մխիթարյան ____________

Չեն մասնակցել՝ Ա.Բաբուջյան , Հ.Բաղդասարյան, Ն.Մաթևոսյան

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

24մայիսի 2016 թվական
գ.Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ու Մ  N 26 -Ա

<<23>> մայիսի 2016 թվական  գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը,

***Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝***

1. «Շիրակ-Ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունում 1.27 տոկոս մասնաբաժնով (1716 հատ հասարակ (սովորական) բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ 100,000.0 դրամ անվանական արժեքով) համայնքային սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

2. Առաջարկել Ախուրյան համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել «Շիրակ-Ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունում համայնքի կողմից տնօրինվող բաժնետոմսերի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ կնքելով բաժնետոմսերի նվիրատվության մասին պայմանագիր:

Ավագանու անդամներ՝  կողմ 7 ( յոթ )  դեմ 0 ( զրո )  ձեռնպահ 0( զրո )

Արտավազդ Սանթրոսյան ________

Արտաշես Գևորգյան ________

Արա Մուշեղյան ________

Կարեն Սերգոյան ________

Սամվել Հովիկյան ________

Վանիկ Մկրտչյան ________

Վահան Մխիթարյան ________

*Չեն մասնակցել՝ Ա.Բաբուջյան , Հ.Բաղդասարյան, Ն.Մաթևոսյան*

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝  Ա. ԻԳԻԹՅԱՆ
24 մայիսի 2016 թվական
գ.Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
## ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ** Ν 27

23 մայիսի 2016 թվական գյուղ Ախուրյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՂՈՑ ՄԱՔՐՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթով և հաշվի առնելով համայնքի կարիքների համար մասնագիտացված (ջրցան, փողոց մաքրող և ձյուն մաքրող) ավտոմեքենա ունենալու անհրաժեշտությունը

***Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.***

Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ համայնքի կարիքների համար ձեռք բերել մասնագիտացված (ջրցան, փողոց մաքրող և ձյուն մաքրող) ավտոմեքենա՝ 4500.0 հազար դրամ ընդհանուր գումարով:

Ավագանու անդամներ՝ կողմ 7 ( յոթ ) դեմ 0 ( զրո ) ձեռնպահ 0( զրո )

Արտավազդ Սանթրոսյան ____________

Արտաշես Գևորգյան ____________

Արա Մուշեղյան ____________

Կարեն Սերգոյան ____________

Սամվել Հովիկյան ____________

Վանիկ Մկրտչյան ____________

Վահան Մխիթարյան ____________

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

24 մայիսի 2016 թվական

գ.Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
## ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ** Ν 28-Ն

23 մայիսի 2016 թվական — գյուղ Ախուրյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 65-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը

*Ախուրյան համայնքի ավագանին որոշում է*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 28-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 65-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

<<**Ճանապարհային տրանսպորտ**>>ծրագրի <<1500,0 հազար դրամ>>թիվը փոխարինել <<25800,0 հազար դրամ>>թվով, որից ֆոնդային մասի <<0 դրամ>>թիվը փոխարինել <<22100,0 հազար դրամ>>թվով,այդ թվում ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝

<< Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>> 5113 հոդվածի <<0 դրամ>> թիվը փոխարինել <<22100,0 հազար դրամ>>թվով:

<<**Բնակարանային շինարարություն**>> ծրագրի << 0 դրամ>> թիվը փոխարինել <<9500,0 հազար դրամ>> թվով, որից ֆոնդային մասի <<0 դրամ>>թիվը փոխարինել <<9500,0 հազար դրամ>>թվով,այդ թվում ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝

<<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>>տողի <<0 դրամ>> թիվը փոխարինել <<9500,0 հազար դրամ>>թվով:

<<**Աղբահանության**>>ծրագիր <<8500,0 հազար դրամ>>թիվը փոխարինել <<13000 հազար դրամ>>թվով, որից ֆոնդային մասի <<0,0 հազար դրամ>>թիվը փոխարինել <<4500.0հազար դրամ>> թվով,այդ թվում ըստ տնտեսագիտական դասակարգման հոդված-ների՝

<< Տրանսպորտային սարքավորումներ>>տողի <<0 դրամ>> թիվը փոխարինել <<4500,0 հազար դրամ>>թվով:

**Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել**

<<Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> 4819 հոդվածին 100.0հազար դրամ ՝ <<Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը դպրոցի խմելու նոր ջրագիծն անցկացնելու համար:

<<Այլ ընթացիկ դրամաշնորհներ>> 4639 հոդվածին 150.0հազար դրամ՝որպես փոխհատուցում <<Հակոբ Կիրակոսյան >> ԱՁ-ին Գյումրի-Ախուրյան-Նոր Ախուրյան ճանապարհի որոշ անբարեկարգ հատվածների հետևանքով երթուղու սպասարկումը կանոնավոր կազմակերպելու համար:

Ավագանու անդամներ՝ կողմ 7 ( յոթ ) դեմ 0 ( զրո ) ձեռնպահ 0( զրո )

Արտավազդ Սանթրոսյան ____________

Արտաշես Գևորգյան ____________

Արա Մուշեղյան ____________

Կարեն Սերգոյան ____________

Սամվել Հովիկյան ____________

Վանիկ Մկրտչյան ____________

Վահան Մխիթարյան ____________

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

24 մայիսի 2016 թվական

գ.Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 29

23 մայիսի 2016 թվական                                        գյուղ Ախուրյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄՈՒՄԱՏՈՒ ԹՎՈՎ 6 ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով դիմումները *Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան հանայնքի 2016թվականի բյուջեի <Սոցիալական հատուկ արտոնություններ> 10-րդ բաժնի , 7-րդ խմբի, 1-ին դասի 4729 հոդվածից 50000 դրամ և <Ընտանիքի անդամներ և զավակներ > 10-րդ բաժնի , 4-րդ խմբի, 1-ին դասի 4729 հոդվածից 145000 դրամ՝ տրամադրել միանվագ դրամական օգնություն դիմումատու թվով 8 անապահով ընտանիքներին ՝ ընդամենը 195000 / մեկ հարյուր իննսունհինգ հազար/

| | |
|---|---|
| 1 Գալստյան Անահիտ - 50000դրամ | 4. Քոչքանյան Ռաֆայել - 30000դրամ |
| 2. Տոնոյան Լիլիթ - 30000դրամ | 5. Հակոբյան Լյովա - 30000դրամ |
| 3. Թորոսյան Մկրտիչ - 30000դրամ | 6. Հակոբյան Արփինե - 25000դրամ |

Ավագանու անդամներ՝ կողմ 7 ( յոթ ) դեմ 0 ( զրո ) ձեռնպահ 0( զրո )

Արտավազդ Սանթրոսյան ____________

Արտաշես Գնորգյան ____________

Արա Մուշեղյան ____________

Կարեն Սերգոյան ____________

Սամվել Հովիկյան ____________

Վանիկ Մկրտչյան ____________

Վահան Մխիթարյան ____________

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

24 մայիսի 2016 թվական

գ.Ախուրյան